ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 17.02.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ

ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-LO-2020/04

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամ

Մասնակից՝ «Սևանի Հացի Գործարան» ՓԲԸ

Մասնակցությամբ՝

Պատվիրատու՝ «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի ներկայացուցիչ՝ Ռ. Մեհրաբյանի

«Սևանի Հացի Գործարան» ՓԲԸ-ի տնօրեն՝ Ա. Ավետիսյանի, ներկայացուցիչներ՝ Ա. Պողոսյանի, Վ. Դավթյանի, Ս. Գրիգորյանի, Ա. Հանեսօղլյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/2» ծածկագրով գնանշման հարցում, սննդամթերքի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 16.01.2020թ.-ի թիվ 26/26-1/485-2020 գրությամբ «Սևանի Հացի Գործարան» ՓԲԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. <u>Գործի նախապատմությունը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի 13.01.2020թ.-ի թիվ 01/13.1/17-20 գրության հիման վրա, 16.01.2020թ.-ին «Սևանի Հացի Գործարան» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 16.01.2020թ.-ին:

17.01.2020թ.-ին կայացված որոշմամբ գործը ընդունվել է վարույթ, իսկ 22.01.2020թ.-ին, 03.02.2020թ.-ին և 06.02.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 06.02.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 17.02.2020թ.-ին:

2. <u>«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը</u>.

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամը 13.01.2020թ.-ի թիվ 01/13.1/17-20 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի կողմից 2019 թվականի նոյեմբերի 20-ին հայտարարված «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/2» ծածկագրով սննդամթերքի գնման ընթացակարգի շրջանակում առաջին տեղերը զբաղեցրած մասնակիցներ են ճանաչվել ՍՅ.ՌՈՒ.ՄԱ ՓԲԸ-ն և ՍԵՎԱՆԻ ՀԱՑԻ ԳՈՐԾԱՐԱՆ ՓԲԸ-ն:

Հայտնում եմ, որ սահմանված ժամկետում առաջին տեղերը զբաղեցրած մասնակիցների՝ ՍՅ.ՌՈՒ.ՄԱ ՓԲԸ-ի և ՍԵՎԱՆԻ ՀԱՑԻ ԳՈՐԾԱՐԱՆ ՓԲԸ-ի կողմից հրավերով նախատեսված փաստաթղթերը չեն ներկայացվել:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացրել են «Սևանի Հացի Գործարան» ՓԲԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

3. <u>«Սևանի Հացի Գործարան» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 17.01.2020թ.-ին գրությամբ դիմել է «Սևանի Հացի Գործարան» ՓԲԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.01.2020թ.-ի թիվ 26/26-1/485-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, 29.01.2020թ.-ին ներկայացված գրությամբ հայտնել է հետևյալը.

««ՍԵՎԱՆԻ ՀԱՑԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՓԲԸ-ն ՀՀ հացի շուկայում ամենախոշոր հաց արտադրող ընկերությունն է, խոշոր հարկատուների ցուցակում զբաղեցնում է 361-րդ տեղը: Աշխատողների թվաքանակը 676 մարդ:

2019թ պետական բյուջեի մուտքերը կազմել են 469մլն (չորս հարյուր վաթսունինը մխիոն) դրամ, որի համար մենք շատ հպարտանում և ուրախանում ենք, ձգտելով հասնել ավելիին:

Ընկերությունը ամենօրյա հացի առաքում է իրականացնում շուրջ 1500 (մեկ հազար հինգ հարյուր) գործընկերների՝ ամսական թվով 35384 հարկային հաշիվներով: Վերջին հինգ տարիների ընթացքում ընկերությունը մրցույթային կարգով շահել ն_ սպասարկել է բազմաթիվ ընկերությունների (կից ներկայացնում եմ հավելվածը): Գնումների գործընթացի ժամանակահատվածում ընկերությում տուժ-տուգանքների կամ բողոքների դեպքեր չին արձանագրվել:

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամի կողմից 2019թ նոյեմբերի 20-ին հայտարարված «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/2» ծածկագրով սննդամթերքի գնման ընթացակարգի շրջանակում առաջին տեղը զբաղեցրել է «ՍԵՎԱՆԻ ՀԱՑԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՓԲՐ-ն:

Սակայն հետագա գործընթացը կարգավորող ARMEPS համակարգի կողմից չենք ստացել որևէ ծանուցում ըստ այդմ ընկերությունը պատրաստ է տրամադրել ցանկացած միջոց առաջացած խնդիրը լուծելու համար:»:

Ելնելով վերոգրյալից՝ «Սևանի Հացի Գործարան» ՓԲԸ-ն Բողոքներ քննողն անձին խնդրել է Ընկերության պարտաճանաչ վերաբերմունքը գնումների գործընթացին և չզրկել հետագա գործընթացներին մասնակցելու իրավունքից:

4. <u>ՍՑ-LO-2020/04 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից 19.11.2019թ.-ին սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարավել է «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Սևանի Հացի Գործարան» ՓԲԸ-ն:

Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ.

1. բավարարում է «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/2» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջներին,

2. «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/2» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով նույն դիմում-հայտարարությունում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին և պարտավորվում է առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 04.12.2019թ.-ի նիստի թիվ 3.1 արձանագրության համաձայն՝ ընթացակարգի 63-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Սևանի Հացի Գործարան» ՓԲԸ-ն:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ծանուցումը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել հրավերի 3-րդ հավելվածով նախատեսված գրությունը և առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ հավելված թիվ 3.1:

Հանձնաժողովի քարտուղարի կողմից 06.12.2019թ.-ին armeps.am համակարգի էլեկտրոնային ոչ ավտոմատ ծանուցման միջոցով Մասնակցի sevanhac@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվել է ծանուցում՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ծանուցումը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել հրավերի 3-րդ հավելվածով նախատեսված գրությունը և առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ հավելված թիվ 3.1:

Հանձնաժողովի 17.12.2019թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ արձանագրվել է, որ առաջին տեղ զբաղեցրած «Սևանի Հացի Գործարան» ՓԲԸ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել հրավերի 3-րդ հավելվածով նախատեսված գրությունը կից իրենց կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ թիվ հավելված N 3.1:

Նույն արձանագրությամբ, Հանձնաժողովը՝ հիմք ընդունելով սույն հրավերի 7.18 կետը՝ (առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու, ինչպես նաև առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ապրանքի ամբողջական նկարագիրը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը), որոշել է «Սևանի Հացի Գործարան» ՓԲԸ-ին առաջարկել երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի քարտուղարի կողմից 17.12.2019թ.-ին armeps.am համակարգի էլեկտրոնային ոչ ավտոմատ ծանուցման միջոցով Մասնակցի sevanhac@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվել է ծանուցում՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի 27.12.2019թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ «Սևանի Հացի Գործարան» ՓԲԸ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել 3-րդ հավելվածով նախատեսված գրությունը կից իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի

ամբողջական նկարագիրը՝ հավելված 3.1-ի, որի արդյունքում հանձնաժողովը, հիմք ընդունելով հրավերի 7.19 կետի 2 ենթակետը, որոշել է Մասնակցի հայտը մերժել:

Բողոքներ քննող անձը 22.01.2020թ.-ի թիվ Ն/ԲՔԱ-ԼՕ/1/1540-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը (այսուհետ նաև՝ Նախարարություն) և խնդրել է հայտնել, «Հայաստանի պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/2» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 06.12.2019թ.-ին և 17.12.2019թ.-ին armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով «Սևանի Հացի Գործարան» ՓԲԸ-ի sevanhac@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվե՞լ են ծանուցումներ թե ո՞չ: Իսկ եթե ծանուցումներն ուղարկվել են, ապա այդ ծանուցումները Մասնակցի կողմից ստացվել են թե ո՞չ:

Վերոնշյալ գրությանն ի պատասխան Նախարարությունը 24.01.2020թ.-ի թիվ Ն/26-1/1687-2020 գրությամբ հայտնել է, որ էլեկտրոնային գնումների համակարգում առկա տեղեկատվության վերլուծությունը ցույց է տալիս, որ «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/2» ծածկագրով ընթացակարգի շրջանակում գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից «Սեվանի Հացի Գործարան» ՓԲԸ-ի «Armeps» համակարգում գրանցած sevanhac@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով 06.12.2019թ.-ին ժամը 17:13-ին, 17.12.2019թ.-ին ժամը 16:34-ին ուղարկվել են էլեկտրոնային ուղերձ նամակներ: Ինչ վերաբերում է վերոգրյալ ծածկագրով ընթացակարգի ոչ ավտոմատ ծանուցումները մասնակցի կողմից ստանալուն, հայտնել են, որ դրանց ետ վերադարձի մասին հաղորդագրություն համակարգում առկա չէ:

«Սեվանի Հացի Գործարան» ՓԲԸ-ն 07.02.2020թ.-ի թիվ ՍՀԳ-Ն-0012 գրությամբ խնդրել է Նախարարությանը տրամադրել հավաստում, առ այն որ armeps.am համակարգի միջոցով ուղարկված նամակը (ծանուցումը) հասել է հասցեատիրոջը, թե ո՞չ, կամ բացվել է վերջինիս կողմից, թե ո՞չ:

Բողոքներ քննող անձը, հիմք ընդունելով վերոնշյալ գրությունը, 07.02.2020թ.-ին թիվ Ն/ԲՔԱ-ԼՕ/1/3270-2020 գրությամբ դիմել է Նախարարությանը և խնդրել է վերը նշված գրությամբ բարձրացված հարցին ընթացք տալ՝ առկայության դեպքում կցելով համապատասխան հիմքերը:

Նախարարությունը, ի պատասխան վերոնշյալ գրությանը, 12.02.2020թ.-ի թիվ Ն/26-1/3487-2020 գրությամբ հայտնել է, որ «Սեվանի Հացի Գործարան» ՓԲԸ-ի բարձրացրած խնդրի կապակցությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը դիմել է համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող կազմակերպությանը: Վերջինս տեղեկացրել է, որ համակարգում առկա չէ ստացող կողմի sevanhac@mail.ru էլեկտրոնային փոստի

հասցեի կողմից չընդունված և ետ վերադարձված «Mail Delivery System» հաղորդագրություն, ինչը վկայում է, որ ոչ ավտոմատ ծանուցումներն առաքվել են առանց խոչընդոտների և ընդունվել են ստացող կողմի սերվերի կողմից: Իսկ դրանց ընթերցումը չի վերահսկվում համակարգի կողմից:

Հայաստանի Հանրապետության «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Փորձաքննությունների բյուրո) կողմից «Սևանի Հացի Գործարան» ՓԲԸ-ին 17.02.2020թ. տրված փորձագետի թիվ 20-0017Պ եզրակացության համաձայն՝ պատվիրատուի կողմից նշված՝ «sevanhac@mail.ru» էլեկտրոնային փոստի հասցեին ստացված էլեկտրոնային նամակների մեջ հայտնաբերվել են 06.12.2019թ-ին ստացված թվով 12 էլեկտրոնային նամակներ (այդ թվում՝ «info@armeps.am» էլեկտրոնային փոստի հասցեից ստացված թվով 2 էլեկտրոնային նամակներ) և 17.12.2019թ.-ին ստացված թվով 20 էլեկտրոնային նամակներ (այդ թվում՝ «info@armeps.am» էլեկտրոնային փոստի հասցեից ստացված թվով 3 էլեկտրոնային նամակներ):

Վերոնշյալ էլեկտրոնային նամակների և դրանց բովանդակության վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը բերված է «Հետազոտական մաս»-ում: «sevanhac@mail.ru» էլեկտրոնային փոստի հասցեին 06.12.2019թ.-ին և 17.12.2019թ.-ին ստացված էլեկտրոնային նամակները՝ «eml» ձևաչափի ֆայլերով, «info@armeps.am» էլեկտրոնային փոստի հասցեից ստացված թվով 5 էլեկտրոնային նամակների տեքստային բովանդակությունները և կցված ֆայլերը համապատասխան պանակներով տրամադրվում են սույն եզրակացության անբաժանելի մասը կազմող «20-0017Պ» ձեռագիր գրառմամբ լազերային սկավառակով:

«sevanhac@mail.ru» էլեկտրոնային փոստի հասցեի «Спам» և «Корзина» պանակներում (որոնցում պահպանվում են համապատասխանաբար մերժված և գործածողի կողմից ջնջված էլեկտրոնային նամակները) պարունակվող էլեկտրոնային նամակներում 06.12.2019թ.-ին և 17.12.2019թ.-ին ստացված էլեկտրոնային նամակներ չեն հայտնաբերվել:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.01.2020թ.-ի թիվ 26/26-1/485-2020 գրությամբ «Սևանի Հացի

Գործարան» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է ... ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Ընթացակարգի հրավերով նախատեսված է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետում հանձնաժողովին է ներկայացնում ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքի անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝

առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ:

Կարգի 46-րդ կետի համաձայն՝ նույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է սույն կարգի 32-րդ կետի 22-րդ ենթակետով սահմանված ժամկետներում: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը…:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ մասնակիցը պետք է ապրանքների գնման դեպքում ներկայացնի՝ իր կողմից հաստատված հայտարարություն առաջարկվող ապրանքի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ:

Հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ Կարգով նախատեսված դեպքերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ:

Քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Հայտը գնահատվում է բավարար, եթե ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները:

Այն դեպքում, երբ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատաս-խանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապա-տասխանությունը: Շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն

զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, իսկ չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի կողմից 19.11.2019թ.-ին սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Սևանի Հացի Գործարան» ՓԲԸ-ն:

Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/2» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով նույն դիմում-հայտարարությունում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին և պարտավորվում է առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

Հանձնաժողովի 04.12.2019թ.-ի նիստի թիվ 3.1 արձանագրության համաձայն՝ ընթացակարգի 63-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Սևանի Հացի Գործարան» ՓԲԸ-ն:

Հանձնաժողովի քարտուղարի կողմից 06.12.2019թ.-ին armeps.am համակարգի էլեկտրոնային ոչ ավտոմատ ծանուցման միջոցով Մասնակցի sevanhac@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվել է ծանուցում՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ծանուցումը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել հրավերի 3-րդ հավելվածով նախատեսված գրությունը և առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ հավելված թիվ 3.1:

Հանձնաժողովի 17.12.2019թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ արձանագրվել է, որ առաջին տեղ զբաղեցրած «Սևանի Հացի Գործարան» ՓԲԸ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել հրավերի 3-րդ հավելվածով նախատեսված գրությունը կից իրենց կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ թիվ հավելված N 3.1:

Հանձնաժողովի քարտուղարի կողմից 17.12.2019թ.-ին armeps.am համակարգի էլեկտրոնային ոչ ավտոմատ ծանուցման միջոցով Մասնակցի sevanhac@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվել է ծանուցում՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանություն-ները:

Հանձնաժողովի 27.12.2019թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ «Սևանի Հացի Գործարան» ՓԲԸ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել 3-րդ հավելվածով նախատեսված գրությունը կից իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ հավելված 3.1-ի, որի արդյունքում հանձնաժողովը հիմք ընդունելով հրավերի 7.19 կետի 2 ենթակետը, որոշել է Մասնակցի հայտը մերժել:

Բողոքներ քննող անձը 22.01.2020թ.-ի թիվ Ն/ԲՔԱ-ԼՕ/1/1540-2020 գրությամբ դիմել Նախարարություն և խնդրել է հայտնել, «Հայաստանի պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/2» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 06.12.2019թ.-ին և 17.12.2019թ.-ին armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով «Սևանի Հացի Գործարան» ՓԲԸ-ի sevanhac@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվե՞լ են ծանուցումներ թե ո՞չ: Իսկ եթե ծանուցումներն ուղարկվել են, ապա այդ ծանուցումները Մասնակցի կողմից ստացվել են թե ո՞չ:

Նախարարությունը 24.01.2020թ.-ի թիվ Ն/26-1/1687-2020 գրությամբ հայտնել է, որ էլեկտրոնային գնումների համակարգում առկա տեղեկատվության վերլուծությունը ցույց է տալիս, որ «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/2» ծածկագրով ընթացակարգի շրջանակում գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից «Սեվանի Հացի Գործարան» ՓԲԸ-ի «Armeps» համակարգում գրանցած sevanhac@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով 06.12.2019թ.-ին ժամը 17:13-ին, 17.12.2019թ.-ին ժամը 16:34-ին ուղարկվել են էլեկտրոնային ուղերձ նամակներ: Ինչ վերաբերում է վերոգրյալ ծածկագրով ընթացակարգի ոչ ավտոմատ ծանուցումները մասնակցի կողմից ստանալուն, հայտնել են, որ դրանց ետ վերադարձի մասին հաղորդագրություն համակարգում առկա չէ:

«Սեվանի Հացի Գործարան» ՓԲԸ-ն 07.02.2020թ.-ի թիվ ՍՀԳ-Ν-0012 գրությամբ խնդրել է Նախարարությանը տրամադրել հավաստում, առ այն, որ armeps.am համակարգի միջոցով ուղարկված նամակը (ծանուցումը) հասել է հասցեատիրոջը, թե ո՞չ, կամ բացվել է վերջինիս կողմից, թե ո՞չ:

Բողոքներ քննող անձը, հիմք ընդունելով վերոնշյալ գրությունը, 07.02.2020թ.-ին թիվ Ն/ԲՔԱ-ԼՕ/1/3270-2020 գրությամբ դիմել է Նախարարությանը և խնդրել է վերը նշված

գրությամբ բարձրացված հարցին ընթացք տալ՝ առկայության դեպքում կցելով համապատասխան հիմքերը:

Նախարարությունը, ի պատասխան վերոնշյալ գրությանը, 12.02.2020թ.-ի թիվ Ն/26-1/3487-2020 գրությամբ հայտնել է, որ «Սեվանի Հացի Գործարան» ՓԲԸ-ի բարձրացրած խնդրի կապակցությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը դիմել է համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող կազմակերպությանը: Վերջինս տեղեկացրել է, որ համակարգում առկա չէ ստացող կողմի sevanhac@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեի կողմից չընդունված և ետ վերադարձված «Mail Delivery System» հաղորդագրություն, ինչը վկայում է, որ ոչ ավտոմատ ծանուցումներն առաքվել են առանց խոչընդոտների և ընդունվել են ստացող կողմի սերվերի կողմից: Իսկ դրանց ընթերցումը չի վերահսկվում համակարգի կողմից:

Փորձաքննությունների բյուրոի կողմից «Սևանի Հացի Գործարան» ՓԲԸ-ին 17.02.2020թ. տրված փորձագետի թիվ 20-0017Պ եզրակացության (այսուհետ նաև՝ Եզրակացություն) համաձայն՝ պատվիրատուի կողմից նշված՝ «sevanhac@mail.ru» էլեկտրոնային փոստի հասցեին ստացված էլեկտրոնային նամակների մեջ հայտնաբերվել են 06.12.2019թ-ին ստացված թվով 12 էլեկտրոնային նամակներ (այդ թվում՝ «info@armeps.am» էլեկտրոնային փոստի հասցեից ստացված թվով 2 էլեկտրոնային նամակներ) և 17.12.2019թ.-ին ստացված թվով 20 էլեկտրոնային նամակներ (այդ թվում՝ «info@armeps.am» էլեկտրոնային փոստի հասցեից ստացված թվով 3 էլեկտրոնային նամակներ):

Վերոնշյալ էլեկտրոնային նամակների և դրանց բովանդակության վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը բերված է «Հետազոտական մաս»-ում: «sevanhac@mail.ru» էլեկտրոնային փոստի հասցեին 06.12.2019թ.-ին և 17.12.2019թ.-ին ստացված էլեկտրոնային նամակները՝ «eml» ձևաչափի ֆայլերով, «info@armeps.am» էլեկտրոնային փոստի հասցեից ստացված թվով 5 էլեկտրոնային նամակների տեքստային բովանդակությունները և կցված ֆայլերը համապատասխան պանակներով տրամադրվում են սույն եզրակացության անբաժանելի մասը կազմող «20-0017Պ» ձեռագիր գրառմամբ լազերային սկավառակով:

«sevanhac@mail.ru» էլեկտրոնային փոստի հասցեի «Спам» և «Корзина» պանակներում (որոնցում պահպանվում են համապատասխանաբար մերժված և գործածողի կողմից ջնջված էլեկտրոնային նամակները) պարունակվող էլեկտրոնային նամակներում 06.12.2019թ.-ին և 17.12.2019թ.-ին ստացված էլեկտրոնային նամակներ չեն հայտնաբերվել:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Փորձաքննությունների բյուրոի կողմից տրված Եզրակացություն համաձայն՝ Պատվիրատուի կողմից նշված՝ «sevanhac@mail.ru» էլեկտրոնային փոստի հասցեին 06.12.2019թ.-ին և 17.12.2019թ.-ին ստացված էլեկտրոնային նամակների մեջ հայտնաբերվել են «info@armeps.am» էլեկտրոնային փոստի հասցեից ստացված թվով 5 էլեկտրոնային նամակներ:

Եզրակացության «Հետազոտական մաս»-ում նշվել է, որ «info@armeps.am» էլեկտրոնային փոստի հասցեից 06.12.2019թ.-ին ստացվել են 2 հատ «Մրցույթի ոչ ավտոմատ ծանուցումներ», որոնք եղել են «ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացման նիստի և նույն ընթացակարգի միաժամանակյա բանակցությունների վերաբերյալ (Եզրակացության էջ՝ 2-3): Իսկ 17.12.2019թ.-ին ստացվել են 1 հատ «Մրցույթի ոչ ավտոմատ ծանուցում», 1 հատ «Ավտոմատ ծանուցում Armeps համակարգից, Որակավորման անհամապատասխանության արդյունքների հրապարակում» և 1 հատ «Ավտոմատ ծանուցում Armeps համակարգից, Արդյունքների հրապարակում» որոնք եղել են համապատասխանաբար «ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-20/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատման հաշվետվության, պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունների վերաբերյալ (Եզրակացության էջ՝ 4-6):

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում

է այն եզրակացության, որ թեև «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/2» ծածկագրով ընթացակարգի շրջանակում գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից «Սեվանի Հացի Գործարան» ՓԲԸ-ի «Armeps» համակարգում գրանցած sevanhac@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով 06.12.2019թ.-ին և 17.12.2019թ.-ին ուղարկվել են էլեկտրոնային ուղերձ նամակներ, դրանց ետ վերադարձի մասին հաղորդագրություն համակարգում առկա չէ, համակարգում առկա չէ նաև ստացող կողմի sevanhac@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեի կողմից չընդունված և ետ վերադարձված «Mail Delivery System» հաղորդագրություն, իսկ ոչ ավտոմատ ծանուցումներն առաքվել են առանց խոչընդոտների և ընդունվել են ստացող կողմի սերվերի կողմից, սակայն, հիմք ընդունելով գործում առկա ապացույցները, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից «Սևանի Հացի Գործարան» ՓԲԸ-ին 17.02.2020թ.-ին տրված փորձագետի՝ Մասնակցի «sevanhac@mail.ru» էլեկտրոնային փոստի հասցեի ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ կազմված թիվ 20-0017Պ եզրակացությունը, Բողոքներ քննող անձը փաստում է, որ 06.12.2019թ.-ին և 17.12.2019թ.-ին «info@armeps.am» էլեկտրոնային փոստի հասցեից Մասնակցի «sevanhac@mail.ru» էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկված «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/2» ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ ծանուցումներ առկա չեն:

Տվյալ դեպքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Մասնակցի կողմից չի խախտվել գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորություն, որն էլ կարող էր հանգեցնել գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը: Ուստի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.01.2020թ.-ի թիվ 26/26-1/485-2020 գրությամբ «Սևանի Հացի Գործարան» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2020/04 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**